

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
_պարոն Լ.Մկրտչյանին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Յաշա Սահակյանից
(ղիմող: անուն, ազգանուն)

ՀՀ Կոտայքի մարզ գյուղ Բջնի թիվ 5-րդ փողոց 1-ին փակուղի տուն 18

(ընկերության վայր, հեռախոսի համար, էլ. փոստի հասցե)
091313131, 094313144, yasha-sahakyan@mail.ru

Կոտայքի մարզի Բջնիի Հովհ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոցՊՈԱԿ պետական
գրանցման համարը 85.210.01595_պետ ռեգիստրի վկայականի
Համարն է 03Ա 057208

(կազմակերպության լրիվ անվանումը, պեպ. գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային
խորհրդի կազմում:


Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Դպրոցի_կանոնադրության պետական գրանցման համարն է 458 02.12.2010թ
2. Ամփոփ տեղեկանքը վերջին երկու տարվա գործունեության վերաբերյալ
և մոտիվացիոն նամակը հանրային խորհրդում ընդգրկվելու վերաբերյալ
3. Վերջին 3 տարվա ԿԳՆ գործունեության քաղաքականության վերաբերյալ

Դիմող Բջնիի միջն.դպրոցի տնօրեն՝



Յա.Սահակյան 29.04.2016թ-ն



ԿԳ Նախարարին կից Հանրային խորհրդի նախագահ պարոն Լ Մկրտչյանին

Հարգելի պարոն նախարար, վերջին երկու տարում ես աշխատել և աշխատում եմ ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի Հովհ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես գործադիր տնօրեն: 2015թ-ի աշնանը գերագանց հանձնել եմ ղեկավարման իրավունքի հավաստագիր ստանալու քննությունները և 2015թ-ի դեկտեմբերի 1-ին ստացել հավաստագիրը: Քաջատեղյակ եմ հանրակրթության ոլորտի բոլոր իրավական փաստաթղթերին և ոլորտում ձևավորված խնդիրներին: Իմ աշխատանքային գործունեության ընթացքում դպրոցում գործել և գործում եմ տարբեր միջազգային ծրագրեր: Դրանցից մեկն է ԱՄՆ-ի «Պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության «Ձեռնարկատիրական և քաղաքացիական կրթությունը ավագ դպրոցի աշակերտների համար» ծրագիրը՝ բաղկացած է մի քանի մասերց:

Օրագիրն իր մեջ ներառում է .
ա/Տնտեսագիտական գիտելիքներ «Կիրառական տնտեսագիտություն» առարկայից
բ/«Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն»,որն ապահովում է հասարակական գիտելիքներ և ձևավորում կորպորատիվ սոցիալական քաղաքացի:

գ/ Իրավաբանական գիտելիքներ , որով աշակերտները ծանոթանում են հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքին , ՀՀ հարկային և ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը: Օրագիրը իրականացվում է եռապնեքով.

1.10-րդ կամ 11-րդ դասարանների աշակերտները ուստարվա 1-ին կիսամյակում «Կիրառական տնտեսագիտություն» առարկայի գիտելիքների բազայի վրա հիմնում են ձեռնարկություն և ծավալում արտադրական կամ սպասարկման գործունեություն, որի ֆինանսական արդյունքները ամփոփելով բաժնետերերին վճարում են դիվիդենտներ , չբաշխված շահույթը պահում են և 2-րդ կիսամյակում հիմնում հասարակական կազմակերպություն , որի գործունեության ուղղությունները տալիս է «Պատանեկան նվաճումներ» կազմակերպությունը: Այդ խնդիրները իրենց մեջ ներառում են .

ա/ համայնքային խնդիրներ
բ/ համայնքային սոցիալական խնդիրներ
գ/ համայնքային բնապահպանական խնդիրներ

2.Օրագրի ուսումնասիրության ընթացքում աշակերտները ծանոթանում են գործարարության հիմնադրման , նրա կառավարման մեխանիզմներին, ՀՀ տնտեսական և հարկային օրենսդրությանը՝ ստանալով որոշակի մասնագիտական կողմնորոշում:

Վերջին երեք տարվա ընթացքում մեզ հաջողվեց գործընկեր կազմակերպությունների միջոցով /որոնց թիվը հասնում է 8-ի/ Բջնի գյուղում իրականացնել 4մլն. դրամի համայնքային բնապահպանական և սոցիալական ծրագրեր:

ա/ Դպրոցում հիմնադրվեց 2500 ք/մ պտղատու այգի.
բ/ Բջնի գյուղի վարչական տարածքում տեղադրվել են գեղեցիկ աղբամաններ՝ թվով 20 հաս
գ/ Գյուղի կենտրոնական մասում 07 հա-ի վրա հիմնել ենք « Բոշի –Սաղ» հանգստյան գոտին.

որտեղ կարող են հանգստանալ գյուղի բնակիչները և գրոսաշրջիկները:
դ/Սարբել ենք Հրազդան գետի հունը 2 կմ հատվածում և տեղափոխել աղբը:
Օրագիրը մեզ հնարավորություն է տալիս աշակերտներին սովորեցնել.
ա/Տնտեսագիտական և իրավաբանական գիտելիքներ.

բ/Ստացած գիտելիքները կիրառել ձեռնարկատիրական գործունեության և հասարակական կազմակերպության պրակտիկ աշխատանքներում:

գ/Համագործակցելու ,շփվելու և հարցեր լուծելու հմտություններ և կարողություններ:

դ/Պրակտիկ աշխատանքներ կատարելու ընթացքում պարզվում է երեխաների նախասիրությունները, որի հիման վրան նրանք ստանում են մասնագիտական կողմնորոշման հնարավորություններ:

Այս ծրագրի շնորհիվ ինձ հաջողվեց ավագ դասարանների աշակերտներին սովորեցնել ՀՀ օրենսդրության շրջանակներում ձեռնարկություն հիմնելու և աշխատատեղեր բացելու հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում և աշակերտների ստացած տեսական գիտելիքները կիրառել ձեռնարկության գործունեության պրակտիկ աշխատանքներում:

Մի քանի առաջարկություններ եմ արել պետական ավարտական քննությունների կազմակերպման , անցկացման և թեստերի բովանդակության վերաբերյալ: Մշակել և ԿԳ նախարարին եմ ուղարկել դպրոցի տնօրենի և ծնողի ու դպրոց ընդունվող աշակերտի հետ կնքվող պայմանագրի ձևը: Ունեմ 39 մանկավարժական աշխատանքային ստաժ , 26 տարվա դպրոցի տնօրենի աշխատանքային փորձ և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելու հմտություններ: 2011թ-ին ճանաչվել եմ ՀՀ Կոտայքի մարզի լավագույն տնօրեն և մասնակցել ԿԳ նախարարությունում լավագույն տնօրենների մրցույթին:

Նպատակս մեկն է ապահովել հանրակրթության իրավական դաշտը, Հանրային խորհրդում ներկայացնել Հանրակրթության մասին ՀՀ օրենքի մի քանի հոդվածների /հոդվածներ 15,16,18, 19,20,21,26 / փոփոխությունների անհրաժեշտությունը և ավագ դպրոցում տալ տնտեսության պահանջներին համապատասխան կրթություն, որպեսզի մեր շրջանավարտները կարողանան գործ դնել , տեղեկացված լինեն ՀՀ օրենսդրությանը , կարողանան պաշտպանել իրենց իրավունքները և կապվեն իրենց հայրենի հող ու ջրին:

ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի Հովհ.Թումանյանի անվան միջնակարգ

Դպրոցի տնօրեն



Յու.Սահակյան

*Իմ տեսակետները ԿԳ նախարարի վերջին երեք տարվա գործունեության
և վարած կրթության քաղաքականության վերաբերյալ.*

Ես կարծում եմ հանրակրթության ոլորտում իրականացվող քաղաքականության ամենակարևոր ուղղություններից է դպրոցներում վարվող ֆինանսական քաղաքականությունը, որից սնվում են մյուս ուղղությունները: ԿԳՆ-ն պետք է թույլ չտար, որ ՀՀ Կառավարությունը կատարեր փոփոխություն 2006թ-ի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման 1-ին 2-րդ կետերում փոփոխելով 101-ից 300 և 301-ից ավելի աշակերտներ ունեցող դպրոցների հաստիքների և ֆինանսավորման նոր եղանակի կիրառումը 2014թ-ի հունվարից: Այս որոշման կիրառումը ծանր ֆինանսական կացության մեջ դրեց 101-ից մինչև 300 աշակերտներ ունեցող դպրոցներին, որի պատճառով խախտվեց դպրոցների բնականոն աշխատանքները: Պարզվում է, որ այս փոփոխությունը խիստ խտրականություն առաջացրեց դպրոցների բնականոն, ֆինանսական և ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործերում: Առանց դպրոցների պարամետրերը հաշվի առնելու՝ կարեցին մեկ տնօրենի տեղակալի, տնտեսվարի և հավաքարարների հաստիքները: 301-ից ավել աշակերտներ ունեցող դպրոցներում հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան իրականացվում է կոորդինացված դաստիարակչական աշխատանքներ, իսկ 101-ից -300 աշակերտներ ունեցող դպրոցներում այդ հաստիքային միավորը չկա և հասկանալի չէ, թե ով է ապահովելու կրթության պետական չափորոշչի 5-րդ գլխի «արժեքային համակարգ» կետերի պահանջները: Եթե դպրոցը չունի տնտեսվար, ով է ապահովելու դպրոցի կանոնադրության 74 կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջները, երբ դպրոցն ունի գազային, ջրային, էլեկտրական տնտեսություններ, գործող ճաշարան և սանհանգույցներ: Մենք մարգպետների հետ կերում ենք զրավոր պայմանագիր կրթության պետական չափորոշիչը ապահովելու վերաբերյալ, եթե չունենք այդ հաստիքային միավորները, ինչպես սալահովիտը այն: Այս որոշումը խտրականության կոպիտ դրսևորում է երեխաների կրթության կազմակերպման գործում, մի դպրոց ունենում է հասկայական ֆինանսական միջոցներ, մյուս դպրոցները թուղթ գնելու կամ գազի վարձ վճարելու հնարավորություն չունեն: Աշակերտների թվի նվազումը և աշակերտների թվով ֆինանսավորումը 101-ից -300աշակերտ ունեցող դպրոցներում չի ապահովում կրթությամ պետական ծրագրի և հանրակրթության պետական չափորոշչի պահանջների կատարումը: Իսկ խտրականությունն արգելված է ՀՀ Սահմանադրության թիվ 14.1 հոդվածով: Թեև նույն որոշման 4-րդ կետով թույլատրվում է մարգպետներին ՀՀ պետ բյուջեն հաստատելուց հետո իրենց ենթակայության դպրոցների ծախսերում կատարել վերաբաշխումներ՝ համաձայնեցնելով ֆինանսների նախարարության հետ, այնուհանդերձ այդ իրավունքը մարգպետները հեշտությամբ չեն իրականացնում:

Ժամանակն է դպրոցների հաստիքների ձևավորման համար հաշվարկել /կադաստրի վկայականով/ մասնաշենքերի քանակը, մակերեսները, կաբինետային համակարգով ուսուցումը, բնակավայրերի բացարձակ բարձրությունը, դպրոցամերձ հողամասերի՝ այգիների առկայությունը, գազի ծախսը՝ կապված տեխնիկական սարքավորումների և բնակլիմայական պայմանների հետ և այլ գործոններ:

ԿԳ նախարարը իր 2012թ-ի մայիսի 3-ի թիվ 388-Ն հրամանի 2-րդ գլխի 37-րդ կետում արած փոփոխությամբ չի կարգավորել 80-ից-120 ժամ բացակայած 11 և 12 -րդ դասարանների աշակերտների ավարտման և փոխադրման գործընթացը: Այն իր մեջ պարունակում է լուրջ կոռուպցիոն ռիսկեր և իրականացման դժվարություններ: Տավուշի և Սյունիքի մարզերի աշակերտները

ինչպես են հասնելու մայրաքաղաք քննություններ հանձնելու : Եթե մենք հետազոտենք բոլոր դպրոցներում բարձր դասարանների աշակերտների բացակայությունները, սպա կհամոզվենք, որ աշակերտների թիվը դպրոցներում պակասում է, իսկ բացակայությունների թիվը ավելանում: Այս երևույթը պայմանավորված է ԿԳ նախարարի 2009թ-ի դեկտեմբերի 26-ին 1105-Ն հրամանով հաստատված /դպրոցի տնօրենի և ծնողի ու աշակերտի հետ կնքվող /պայմանագրի անկատարությամբ: Այսպես պայմանագրի թիվ 16 կետում գրված է, որ դպրոցի ներքին կարգապահական կանոնները սահմանում են սովորողի իրավունքները և պարտականությունները, որոնց կատարումը պարտադիր է, սակայն կարգապահական կանոնները ապահովող ոչ մի տրամ չկա, դրանք ուղղակի գրված են թղթի վրա:

Կամ պայմանագրի 19-րդ կետում ասվում է սովորողի նկատմամբ կրկնակի կարգապահական տույժ կիրառելու դեպքում դպրոցը կարող է՝

1. Առաջարկել օրինական ներկայացուցչին՝ սովորողին տեղափոխել այլ դպրոց.

2. Դիմել սոցիալական աջակցության բնագավառի լիազոր մարմնին՝ սովորողին սոցիալական աջակցություն կազմակերպելու առաջարկով: Երկու կետն էլ չեն աշխատում, որովհետև վատ վարք ունեցող երեխան ուր էլ որ գնա, նույնն է, իսկ գյուղերում երեխային ուր տանեն:

Պայմանագրի 21 կետում ասվում է, ուսումնական պարապմունքներին սովորողի չհաճախելու դեպքում օրինական ներկայացուցիչը կրում է պատասխանատվություն, որ օրենքով և ինչպես: Պայմանագրում եղած այս բացթողումները լրջորեն ազդում են դպրոցում ներքին կարգապահական կանոնները իրականացնելու վրա և հեղինակագրկում դպրոցներին: Կարծում եմ պետք է հստակեցվի պայմանագրի վերոհիշյալ կետերը, որ պատժաչափերը հստակ լինեն այս կամ այն արարքները կատարող աշակերտների համար:

Բարձր դասարանների աշակերտների բացակայությունները և անգործությունները կանխելու համար անհրաժեշտ է ներդնել իրավական զսպող մեխանիզմներ, ստանց որի դպրոցների ներքին կարգապահական կանոնները պահպանել հնարավոր չէ:

Պետք է կասեցվի կամ նոր բովանդակություն ստանա Շանրակրթության մասին 22 օրենքի թիվ 26 հոդվածի 5-րդ կետ՝ պարզ ընթացակարգով ատեստացիա անցկացնելու մասին: Սա ավելորդ գործընթաց է, որ դպրոցին և ուսուցչին ոչինչ չի տալիս: Մենք և մարզպետարանի կրթության վարչության աշխատակիցները զբաղված ենք անհեթեթ և թղթատար աշխատանքներով: Ուսուցչի մասնագիտական և մեթոդական գիտելիքները որոշակի մակարդակի վրա պահելու համար ուսուցիչները 3 կամ 5 տարին մեկ պետք է անցնեն վերապատրաստում և հանձնեն գրավոր քննություններ՝ մասնագիտական և մեթոդական գիտելիքներից և ստանան որոկավորման որոշակի տարակարգ՝ իհարկե հիմք ընդունելով դպրոցի տնօրինության և մասնախմբերի նախապես ներկայացրած գրավոր կարծիքները ուսուցչի վերաբերյալ: Քննությունները կարող են դառնալ նաև զսպող մեխանիզմ տնօրենների և մասնախմբերի ներկայացրած կարծիքների վերաբերյալ: Առաջարկում եմ կազմակերպել մաթեմատիկայի կամ հայոց լեզվի ուսուցիչների փորձնական քննություն կազմակերպել դպրոցի ծրագրի շրջանակներում և դուք կտեսնեք ինչ մանկավարժական կադրեր ունենք: Այս մեխանիզմը հնարավորություն կտա միշտ որոշակի մակարդակի վրա պահել ուսուցիչների գիտելիքները և կարող է զսպել ԲՈՒՀ-երի անգործությունը, որ ուսման վարձի դիմաց դիպլոմներ չտրամադրեն ուսանողներին:

Շարզելի պարոն նախարար ԿԳ նախարարի 2013թ-ի հուլիսի 30-ի թիվ 1001-Ն հրամանով հաստատված՝ ուսուցչի դպրոց ընդունելության կազմակերպման կարգը և ԿԳ նախարարի 2013թ-ի հունիսի 19-ի թիվ 317-Ա հրամանով՝ ուսուցիչների քննություններ տալու հարցաշարերը

ոչ մի կապ չունեն նրա մասնագիտական գիտելիքների և որակական հատկանիշների հետ: Այս հրամանները հնարավորություն են տալիս քողարկելու ԲՈՒՇ-երի անգործությունը և մեզ շեղում են բուն իրականությունից:

Խիստ հնացած է նաև դպրոցներում պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման համակարգը: Անհրաժեշտ է խուսափել ավելորդ ծախսերից և հնարավորություն տալ դպրոցներին ԿԳ նախարարության սահմանած նմուշների հիման վրա մի քանի օր առաջ կազմել գրավոր քննական աշխատանքների հարցաշարերը կազմված միևնույն մակարդակ ունեցող, բայց տարբեր վարժություններ պարունակող տարբերակներից: Կամ հանձնարարել այդ հարցաշարերը պատրաստելու ԳԹԿ-ին, որը կարող է էլեկտրոնային կապով ուղարկել քննության օրը բոլոր դպրոցներին: ՀՀ հանրակրթության պետական չափորոշիչը նախատեսում է սովորողների մոտ ձևավորել արժեքային համակարգ, սակայն քննական ողջ պրոցեսը իր կազմակերպման եղանակներով աշակերտներին կտրում է ինքնուրույնությունից և սովորեցնում գողանալ, արտագրել, հուշել, որը հակասում է հանրակրթության պետական չափորոշիչին:

Առաջավոր տեխնոլոգիաների այս ժամանակաշրջանում շատ հեշտ է անհատական հարցաշարեր պատրաստելը ստանյակ տարբեր տարբերակներով, որը հնարավորություն կտա հստակ պարզելու աշակերտների գիտելիքների մակարդակը, կտրվորեցնի ինքնուրույնություն և կրթության արտագրությունը: Ձևաթղթերում խաչեր անելով գիտելիք չի ստուգվում:

Լուրջ անհրաժեշտություն է առաջացել փոփոխելու հանրակրթության բովանդակությունը: Այսօր ոչ մի կապ չկա Հանրակրթության և մեր տնտեսության միջև, աշակերտը 12 տարի սովորելուց հետո այսպիսի կրթությամբ իր երկրում աշխատել և ապրել չի կարողանում, որի արդյունքում սկսում են լքել երկիրը: Մենք ընտրել ենք Սոցիալական շուկայական տնտեսության ուղղությունը, որը հենվում է մասնավոր սեփականության վրա: Բնակչության զգալի մասը սեփականատերեր են, սակայն դպրոցում չեն ուսումնասիրում տնտեսագիտություն, 12 տարի դպրոցում մարդ սովորի, չիմանա ինչ է փողը, փողի կուրսը, ինչ է շուկայական տնտեսությունը և ինչպես է այն գործում, զարգանում, ինչ է առաջարկը, ինչ է պահանջարկը, ինչ է բանկը: Ավագ դպրոցում 17 ժամ տնտեսագիտության ժամերը շատ քիչ է, որ մեր երեխաները այս հասարակության մասին պատկերացում կազմեն: 12-րդ դասարանի շրջանավարտը պետք է հասկանա ինչ է փողի կուրսը, նրա բարձրացումը կամ նվազումը ինչ հետևանքներ կարող է ունենալ իր տնտեսության վրա, դրա փոխարեն սովորում ենք Հայոց եկեղեցու պատմություն, որը կարելի էր անցնել միայն 9-րդ դասարանում: Նկատի ունեցեք, որ պետության ձեռքում է մասնավոր սեփականության 25%-ը, բայց հանրակրթության պատվերի 95% կատարում է պետությունը: Սա լուրջ հակասություն է սեփականության ձևի և կրթության պատվեր իրականացնողի միջև: Մի խոսքով այսօրվա Հանրակրթությունը այս տնտեսության մեջ պահանջարկ չունի: Դասագրքերի խնդիրները կապ չունեն այս տնտեսության շինարարական աշխատանքների, նախագծերի, նախահաշիվների, գյուղատնտեսական խնդիրների, բանկային վարկերի և տոկոսների հետ, որին ամեն օր առնչվում է մեր բնակչությունը:

Մեացած մի շարք հարցեր կներկայացնեմ Հանրային խորհրդում:

Հարգանքով ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի Հովհ.Թումանյանի անվան

միջնակարգ դպրոցի տնօրեն



Յա.Սահակյան 29.04.16թ-ն